

կ'առնուիք Առաջ մարմնոյն ամէն մասերը կը լուսանկարուին, և յետոյ իրենց ո՛ւ իցէ մէկ յատկանիշը, ինչպէս են մարմոյն վէրքերը, ուռեցցները, պատկերները են:

Մարդաչափութիւնը Պէտքիյոնի դրութեամբ կը գործադրուի. իսկ մատոնանշանները՝ մատոնեառն ծայրերովը կ'ըլլան. բայց ո՛չ թէ Ամերիկան դրութեամբ, այլ կուսաթիի հնարածովը. այդինքն՝ մատներուն ձախէն աջ՝ թեթև թաւալական շարժում մը տալով, որով ո՛չ թէ միայն կեղրոնական մասը լաւ՝ այլ եզերքներն ալ որոշ և ամրող կ'ելլեն; Տասը մատներուն զրոշմա ալ կ'առնեն, աւելի կարենութիւն տալով ճախիններուն, քանի որ անոնք աջ ձեռքի մասներէն աւելի թիշ ճեւափոխուած են. յետոյ այս զրոշմները՝ գծերուն թիւին, ճեին և տեսակին համեմատ կը դասակարգեն:

Ուրեմն աւելի մատնացոյց դրութեան է որ կարեորութիւն կու այս խտալական վարժարանը՝ քան թէ մարդաչափութեան, քանի որ այս վերջինը երբեմն սիսալ ճամրաներու կ'առաջնորդէ զմեզ և երբեմն ալ անկարելի կ'ըլլայ գործադրութիւնը կիներուն վրայ:

Բրոֆ. Օթթոլէնկի մատնադիտակով ո՛չ թէ միայն ոճրագործները կը զանազանէ, այլ նոյն հսկ ո՛ր ձեռքով գործած ըլլան ալ մէջ տեղ կը հանէ և ոճրագործութեան շարժառիթն ալ կը գուշակէ: Զարմանալի գիտութիւն մ'է, որ Փիզիբական փորձեր ընելով՝ հոգեկան կարողութիւնները գուշակել կու տայ մարդուս: Ուրեմն յայտնի է թէ այս դրութիւններով և գործիքներով զինուած ոստիկանութիւն մը՝ աւազակաց ահ և սարսափ պիտի առթէ. և յուսանց թէ մարդասապաններն ալ տեսնելով իրենց առջև գտնուող անխուսափելի վիճակը՝ չկարինան իրենց ոճիրները գործադրել:

8. ՖէՍՃԵԼԱՆ

ԲԻՒԹԱՆԻԱԱ

Գաւառաւաթերթ ի գմիտի

Ամէն գաւառի անհրաժեշտ հարկ է պաշտօնաթիրթի մը գոյսթիւնը՝ յօդուտ մէն մի գաւառացիին, որպէս զի տեսնէ ան իր շուրջի կեանքը, եռուզենն ու անցուարձը, և միանգամայն անոր զրական բաժինն հաճելի և օգտակար զրաղանք մը շահի:

«Բիւրանիա»յի նպատակը նոյն է, ինչ որ հոս կ'ըսենք. և սկսած է իր թիւերուն մէջ իրագործել զայն: Անոր առանձին բաժիններն են Գրական ասպարէզ. Գաւառային լուրեր. Նամականի և Ցեղական ինդիրներ՝ որոնց կրնայ հետաքրքրուկ զաւառացի ամէն զասակարգ: Իր առաջին թուոյն մէջ ճոխ բովանդակութեամբ կը ներկայանայ «Բիւրանիա»ն, ինչպէս սովորութիւնն է ամէն թերթի և օրագրի թիւ 1^ո, գո՞նէ զո՞նէ ... réclameի համար:

Սոյն առաջին թուոյն մէջ առաջնակարգ խնդրոյ մը շուրջը կը գեցէրի Պ. Սարգիս Ղազիկեան, բաց Նամակ մը Խզմիտի Յամ. Երեսփոխաններուն ուղղած, ուր կ'առաջարկէ և կը թափանձէ յանուն նիկոմիդիոյ հասարակութեան, որ ի նկատի առնեն իրենց ժողովրդեան շահն ու յառաջացումը և պաշտպան կանզնին անոնց դատին. վասն զի Հայտար Փաշայի երկաթուղոյ ընկ. ը իր շինած ցարափի ծափեցն հանելու համար ստիպած վաճառականութիւնն է Հայտար Փաշայի ճամրով գործել:

«Բիւրանիա»ն ներկայ իր հինգ թիւերուն մէջ գրական մեծ արժէք մը չի ցուցներ զեռ, սակայն պատմական թերթօնով մը թերենս իր բնիթերցողներէն շատերը լեցնէ օգտաշատ հետաքրքրութեամբ մը. այն է Բիւրանիոյ սկզբնաւորութեան պատմութիւնը, գրուած Բրօֆ. Աբր. Տ. Յակոբեանէ: Վերջերս իմացանք որ թերթիս զրական բաժինն յանձնուեր է Ահարոնին. ուրեմն յոյս ունինք որ Ահարոն ջանայ

անոր գրականին մասնաւոր զարկ մը տալ: Իր «Դէպի Ֆնակ» ոտանաւորովը (թիւ 5) կը մտնէ ան թերթիս զրականութեան տը-նակը:

«Բիյրահիայ»ի փայլուն և շահաւէտ զիրք մը փափազած ատենիս՝ կը մաղ-թենց նաև որ օրին մէկն ալ յանկարծ դադարման չենթարկուի, ինչ որ սովորա-կան վախճանն է մեր օրագիրներուն, որ շատ անգամ հազիւ ծնած՝ գերեզման կը՝ մտնեն:

Պ Ա Ր Տ Ի Զ Ա Կ

Հրտորկ, Պարտիզակի Բարձրագոյն Վյժընափ Ընթացաւարտից Ընկերութեան

Անցեալ աշնան հովերուն՝ մինչ կը թափթիէին տերեւները զոսացած ու գու-նատ, ու կը մերկանային պարտէզներն իրենց զարդեին՝ կը ծաղէցր անդին ուրիշ մը, բազմատեսակ, գոյնզոյն, տեւելու պայմանաւ:

«Փարտիզակ» թերթն էր այդ, որ լոյս կը տեսնէր Պոլիս 1909ի Հոկտ. 1ին, Խմբագրաբետութեամբ Տրգութ. Յովսէփ Տ. Ստեփանեանի:

Պարտիզակի Բարձր. Վյժեն.ի ընթա-ցաւարտից ընկերութիւնը, որ գոյութիւն ունեցած է 1892ին՝ պիտուալով Սահմա-նադրական ազատ հորիզոնէն օգտուիլ, ինչպէս ուրիշներ, ինըն ալ յառաջադի-մութեան մեծ ցայլեր ցոյց տուաւ ու նե-տուեցաւ զրական ասպարէզին մէջ, ուկան մ'ի ձեռին: Թերթիս անուան ընտրութեան մասին խոսած ատեն Նորեր և Լուրեր հա-ւարզող՝ հետեւեալ փոքր տեղեկութիւնն ալ կու տայ.

Մուտք առաջ սոյն անուան թերթ եւած է արցն: Ասէտ 30 և աւելի տարիներ առաջ, Պարտիզակ զիւզա-քաղաքին մէջ հրատարակուած է համաստեն թերթ մը, որուն վիստոր խմբագրներն եղած են Տեսր Ալմաստ Տեր Ցակորեան և Մինաս Գ. Մաւսեան: Այդ թերթը ձեռացիք եր հարկաւ...»:

Այս թերթին նիւթերուն նկատմամբ՝ հետեւեալ զաղափարը պիտի ունենայ ա-

նոր ընթերցողը: Առջի էջերը բանալուն՝ կարծես պիտի մտնէ ան շնչնքի մը գաւի-թը, ու պիտի լսէ նախ «Երկու Խօսք Դի-ւանեկն» և «Երկու Խօսք Խմբագրապետէն» առաջինը Գործազիր ժողովոյ Ատենադպիր՝ Պ. Գ. Ա. Գարբրիէլեանէ, երկրորդը Տրգութ. Տ. Ատենագրանեանէ: Անոնց կը յաջորդեն չորս խմբագրականներ (Թուրքերէն լեզուն: — Խօսերու արունեաւը: — Գաղրե՛լ րէ լի գաղրե՛լ: — Մ. Լեռորու ֆավոր): Ընդ-հանրապէս նիւթերու բովանդակութիւնը կը հայի Բ. վարժարանին և անոր ըն-թացաւարտից շորջը, ինչպէս հարկ էր որ ըլլար. որուն ամենէն հետաքրքրական ու շահագրգիռներէն են: Հայուսէկիս: — Համաստ Պատմ. Պարտիզակի Բ. Վյժերն.ի — Ռուռագիտ Բ. Վյժերն.ի Հին և Նոր ուսուցիչներու կեանքին: — Բարձր. Վյժերն.ի Ռուսանուական թիկերակցութիւնները, և այլն: Թիկերթն էջերը կը զարդարեն համանուն գիւղաբաղացին տեսարանը. Բարձր. Վար-ժարանը և անոր երկու տնօրինները:

«Պարտիզակ» որ 48 էջերէ կը բաղկա-նայ, առ այժմ 6 ամիսն անգամ մը լոյս պիտի տեսնէք: Մենք կը մաղթենք իրեն ճշմարիտ օգտակարութեան մը հետ՝ գոնէ ամսաթերթի կերպափոխում մը:

Հ. Գ. Տաթևու

Դր. ԽՄԲ. Պարտիզակ կէս դար առաջ ու-նեցած է իր անդրանիկ ձեռագիր թերթը Բան-րեր Պարտիզակին անունով, որուն խմբագրին եղած է տերլոյն ուսուցիչներէն Մկրեան (յետոյ Ալժ. Տ. Յ. Աւ. Բն. Մկրեան):

Բնակալութեան շրջանին անպակաս էին հոն Խմբատիպ հանդէսները: Սահմանադրութեան հետ ունեցաւ զաւեշտաթերթ մը Կշիռ որ բա-ւական շարունակուեցաւ, Խմբ. Գէորգ Յ. Գիւթ-նէրեան, Պարտիզակ (որ մէկ թիւ միայն լոյս տեսաւ) և ուրիշներ ամէնքն ալ խմբատիպ. և յոր տարւոյն հետ տպագրութեամբ հրատարա-կուիլ սկսաւ Փարոս ամսաթերթը Ազգային ըն-կերական Գրական, Բարոյական (տարեկան 5 ֆր. հասցէ Շեքտան Պարոս Գ. Տաթևու) որ կը խոստանայ գաւառական կոյս գրա-կան հանդէս մը ըլլալ: